

#### 5.4. 2013 թվականի հոկտեմբեր ամսվա շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մշտադիտարկում

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, ՀՀ շրջակա բնական միջավայրը 2013թ. հոկտեմբերին ունեցել է հետևյալ բնութագիրը.

**5.4.1. Օդային ավազանի որակի մշտադիտարկում:** Երևան քաղաքի 7 դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 867 փորձանմուշ: Որոշված նյութերից փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.2 անգամ: Քաղաքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ավտոմատ կայանների միջոցով որոշվել են ածխածնի մոնօքսիդի, ազոտի օքսիդների (ազոտի մոնօքսիդ, ազոտի երկօքսիդ և ընդհանուր օքսիդներ) և ծծմբի երկօքսիդի պարունակությունները: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 15 354, ազոտի օքսիդների համար՝ 2 421, ծծմբի երկօքսիդի համար՝ 21 206 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքերի տվյալների, մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Քաղաքի պասիվ նմուշառման 39 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 283 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Գյումրի քաղաքի** մշտական դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 27 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.9 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 192 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.5 անգամ:

**Վանաձոր քաղաքի** մշտական 3 դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և փոշու պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 279 փորձանմուշ: Որոշված նյութերից փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 3.0 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 192 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.3 անգամ:

**Ալավերդի քաղաքի** մշտական 3 դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ընդհանուր առմամբ, վերցվել է օդի 248 փորձանմուշ: Որոշված նյութերից փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 2.0 անգամ: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 5 434, ազոտի օքսիդների համար՝ 1 638, ծծմբի երկօքսիդի համար՝ 5 329, գետնամերձ օզոնի համար՝ 809 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքի տվյալների, ավտոմատ կայանի հարակից տարածքի մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված նյութերից ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 3.9 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 18 և հարակից Մադան գյուղի տարածքում տեղադրված 20 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 304 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.6 անգամ:

**Հրազդան քաղաքի** մշտական դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և ցեմենտի փոշու պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 91 փորձանմուշ: Մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.7 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 20 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 160 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Արարատ քաղաքի** մշտական դիտակայանում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 31 փորձանմուշ: Ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.5 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 12 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 96 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Ծաղկաձոր քաղաքի** պասիվ նմուշառման 14 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 112 փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Քաղաքի մշտադիտարկման կայանում շուրջօրյա ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 93 փորձանմուշ: Որոշված նյութերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Կապան, Քաջարան և Մեղրի քաղաքների** պասիվ նմուշառման համապատասխանաբար 11, 15 և 3 դիտակետերի միջոցով վերցվել է մթնոլորտային օդի 84, 118 և 24 փորձանմուշ: Արենի գյուղի (ՀՀ Վայոց ձորի մարզ) պասիվ նմուշառման 4 դիտակետերի միջոցով վերցվել է մթնոլորտային օդի 36, Սյունիք գյուղի (ՀՀ Սյունիքի մարզ) 9 դիտակետերի միջոցով՝ 72 փորձանմուշ: Նշված բնակավայրերի մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Ամբերդ գյուղում** պասիվ նմուշառման 5 դիտակետերի միջոցով վերցվել է մթնոլորտային օդի 40 փորձանմուշ: Գյուղում տեղադրված կայանում վերցվել է օդի 93 և փոշու 31 փորձանմուշ: Օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու փորձանմուշներում՝ քլոր, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 քիմիական տարրերի պարունակությունները: Ազոտի երկօքսիդի և ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Ավտոմատ սարքի միջոցով գետնամերձ օդոնի պարունակության որոշման համար կատարվել է օդի 847 դիտարկում:

**Ամբերդ գյուղի ավտոմատ կայանի հարակից տարածքի տեղումներում (անձրև և ձյուն) վերահսկվող նյութերի պարունակությունը, 2013թ. հոկտեմբեր**

մգ/դմ<sup>3</sup>

Ցուցանիշներ	Նմուշների վերցման ամսաթիվը					
	04	05	06	06-07	18-19	23-24
Ջրածնային ցուցիչ (pH)	7.62	7.04	7.17	7.18	7.18	6.82
Տեսակարար էլեկտրահաղորդականություն (μՄհմ/սմ)	66.2	32.9	52.4	31.2	37.3	17.6
Սուլֆատ իոն	3.52	1.42	3.32	1.41	2.15	0.75
Քլորիդ իոն	0.53	0.38	0.88	0.38	0.53	0.20
Նիտրատ իոն	1.76	1.17	3.24	1.16	1.13	1.50
Ֆտորիդ իոն	0.02	0.00	0.01	0.00	0.02	0.02
Ամոնիում իոն	< 0.100	0.39	0.87	0.38	0.21	0.54

**5.4.2. Մակերևութային ջրերի որակի մշտադիտարկում:** Հոկտեմբերին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 31 գետերի, Արփիլճի, Ապարանի, Ագատի, Կեչուտի ջրամբարների, Երևանյան լճի 81 դիտակետերում: Վերցված 81 փորձանմուշներում որոշվել է 40-ական ցուցանիշ:

**Մակերևութային ջրերի քիմիական կարգավիճակը, 2013թ. հոկտեմբեր**

Ջրավազանային կառավարման տարածք	Գետավազան	Ջրային օբյեկտ	Դիտակետի համարը	Դիտակետի տեղադրությունը	Քիմիական կարգավիճակի դասը	Ըստ տվյալ ցուցանիշի
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք	Դեբեդ գետի ավազան	Փամբակ	1	Հարթագյուղ գյուղից 0.5 կմ վերև	1	-
			2	ք.Մայիտակից 0.5 կմ ներքև	3	Նիտրատ իոն
			3	ք.Վանաձորից 0.6 կմ վերև	3	Նիտրատ իոն
			4	ք.Վանաձորից 4.5 կմ ներքև	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն
		Դեբեդ	5	Մարցիգետի թափման կետից 0.5 կմ ներքև	1	-
			6	ք.Այրումից 0.5 կմ վերև	3	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն
			7	ՀՀ պետական սահմանի մոտ	3	Ֆոսֆատ իոն
		Չորագետ	8	ք.Ստեփանավանից 0.5 կմ վերև	2	-
			10	Գետաբերան	2	-
		Տաշիր	11	Միխայելովկա գյուղից 0.5 կմ վերև	4	Ամոնիում իոն
			12	Սարատովկա գյուղից 0.5 կմ ներքև	3	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն
		Մարցիգետ	13	Գետաբերան	3	Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն
		Ախթալա	14	Գետաբերան	5	Ցինկ, կադմիում, մոլիբդեն, մանգան, սուլֆատ իոն
		Գարգառ	210	Կոռոթան գյուղի շրջանում	1	-
	342		Ակունք	1	-	
	343		Գետաբերան	2	-	
	Աղստև գետի ավազան	Աղստև	15	ք.Դիլիջանից 1.2 կմ վերև	1	-
			16	ք.Դիլիջանից 0.5 կմ ներքև	3	Ամոնիում իոն, նիտրիտ իոն
			17	ք.Բջևանից 1 կմ վերև	2	-
		Գետիկ	18	ՀՀ պետական սահմանի մոտ	2	-
			19	ք.Ճամբարակից 0.5 կմ վերև	1	-
20			Գետաբերան	1	-	
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք	Ախուրյան գետի ավազան	Ախուրյան	31	Ամասիա գյուղից 0.5 կմ վերև	2	-
			32	Ամասիա գյուղից 1 կմ ներքև	3	Ամոնիում իոն
			33	ք.Գյումրիից 0.8 կմ վերև	2	-
			34	ք.Գյումրիից 5 կմ ներքև	4	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն
	Աշոցք	37	Գետաբերան	2	-	
	Մեծամոր գետի ավազան	Մեծամոր	40	ք.Վաղարշապատից 10 կմ հարավ	2	-
			41	ք.Վաղարշապատից 11 կմ հարավ-արևելք	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն
42			Ռանչպար գյուղից 0.5 կմ ներքև	3	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք	Քասախ գետի ավազան	Քասախ	44	ք.Ապարանից 0.5 կմ ներքև	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն
			45	ք.Աշտարակից 1 կմ վերև	4	Ֆոսֆատ իոն
			46	ք.Աշտարակից 3.5 կմ ներքև	4	Ֆոսֆատ իոն
			47	Գետաբերան	4	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ջրավազանային կառավարման տարածք	Գետավազան	Ջրային օբյեկտ	Դիտակետի համարը	Դիտակետի տեղադրությունը	Քիմիական կարգավիճակի դասը	Ըստ տվյալ ցուցանիշի	
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք	Քասախ գետի ավազան	Գեղարոտ	48	Արագած գյուղից 0.5 կմ վերև	2	-	
			49	Գետաբերան	3	Ամունիում իոն, նիտրիտ իոն, նիտրատ իոն	
		Հախվերդ	50	Փարպի գյուղից 0.5 կմ ներքև	4	Ֆոսֆատ իոն	
	Հրազդան գետի ավազան (միջին ներքին հոսանք)	Հրազդան	52	Քաղսի գյուղից 0.5 կմ ներքև	2	-	
			53	Արգել գյուղից 0.5 կմ ներքև	3	ԹՔՊ	
			54	Արգնի ՀԷԿ-ից 0.5 կմ ներքև	3	Նիտրատ իոն	
			55	ք.Երևանից 6 կմ ներքև, Դարբնիկ գյուղի մոտ	5	Լուծված թթվածին, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, վանադիում	
		56	Գետաբերան	5	Ամունիում իոն, ֆոսֆատ իոն, վանադիում		
		Հրազդան	225	Գեղանիստ գյուղի մոտ	5	Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	
	Գետառ	59	Գետաբերան	5	Ամունիում իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն		
	Մարմարիկ գետի ավազան	Մարմարիկ	57	Հանքավան գյուղից 0.5 կմ վերև	2	-	
			58	Գետաբերան	2	-	
		Ծառաղբյուր գետի ավազան	Ծառաղբյուր	311	ք.Ծաղկաձորից վերև	2	-
				312	ք.Ծաղկաձորից ներքև	5	Ֆոսֆատ իոն, ամունիում իոն
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք	Վեղի գետի ավազան	Վեղի	80	Ուրցաձոր գյուղից 0.5 կմ վերև	2	-	
	Արփա գետի ավազան	Արփա	83	ք.Ջերմուկից 0.5 կմ վերև	2	-	
			84	ք.Վայքից 0.5 կմ վերև	2	-	
			85	ք.Վայքից 0.5 կմ ներքև	2	-	
			86	ք.Եղեգնաձորից 0.5 կմ վերև	2	-	
			87	Արենի գյուղից 0.5 կմ ներքև	2	-	
Եղեգիս	88	Շատին գյուղից 0.5 կմ ներքև	1	-			
Հարավային ջրավազանային կառավարման տարածք	Մեղրի գետի ավազան	Մեղրիգետ	89	ք.Մեղրիից 0.5 կմ վերև	1	-	
			90	Գետաբերան	4	Ամունիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	
	Ողջի գետի ավազան	Ողջի	91	ք.Քաջարանից 1.7 կմ վերև	1	-	
			92	ք.Քաջարանից 1.8 կմ ներքև	5	Ամունիում իոն, ֆոսֆատ իոն	
					4	Մոլիբդեն, մանգան	
			93	ք.Կապանից 0.8 կմ վերև	2	-	
		5			Մոլիբդեն		
		94	ք.Կապանից 6.8 կմ ներքև	3	Ամունիում իոն, նիտրիտ իոն, կադմիում		
	5			Մոլիբդեն, մանգան, սուլֆատ իոն			
	Արծվանիկ		96	Գետաբերան	3	Ամունիում իոն, կադմիում	
			5	Մոլիբդեն, մանգան, սուլֆատ իոն			
	Գեղի գետի ավազան	Գեղի	97	Սջաբաջ գյուղից 0.5 կմ վերև	1	-	
			98	Գետաբերան	2	-	
	Որոտան գետի ավազան	Որոտան	99	Գորայք գյուղից 0.5 կմ վերև	1	-	
100			ք.Սիսիանից 1 կմ վերև	4	Ֆոսֆատ իոն		
101			ք.Սիսիանից 2 կմ ներքև	4	Ֆոսֆատ իոն		
102			Տաթև ՀԷԿ գյուղից 0.5 կմ ներքև	2	-		
Սիսիան գետի ավազան	Սիսիան	103	Արնիս գյուղից 0.5 կմ վերև	2	-		
		104	Գետաբերան	2	-		
Գորիս գետի ավազան	Գորիսգետ	106	ք.Գորիսից 3 կմ վերև	1	-		
		3	Ֆոսֆատ իոն				
		107	ք.Գորիսից 1.5 կմ ներքև	5	Ամունիում իոն, ֆոսֆատ իոն		

**ՀՀ ջրամբարների և Արաքս գետի աղտոտվածության վիճակը, 2013թ. հոկտեմբեր**

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները								
			թփՊ, մգՕ <sub>2</sub> /լ	թփՊ, մգ/լ	լ/ճր, մգN/լ	լ/ճր, մգN/լ	լ/ճր, մգP/լ	լ/ճր, մգ/լ	լ/ճր, մգ/լ	լ/ճր, մգ/լ	լ/ճր, մգ/լ
Արաքս	26	Հրազդան գետի թափման կետից վերև	-	-	-	0.0643	0.00142	0.00306	0.01321	0.01218	155.4
	27	Հրազդան գետի թափման կետից ներքև	-	-	2.313	0.1632	0.00178	0.00278	0.01261	0.01585	140.9
	28	Արմաշ գյուղից 0.5 կմ ներքև	-	-	0.698	0.1571	0.00133	0.00315	-	0.01633	145.5
	29	ք.Ազարակից 2 կմ հարավ	-	36	-	0.0305	0.00200	0.00377	0.01342	0.01115	230.0
	30	ք.Ազարակից 2.5 կմ հարավ-արևելք	-	66	-	0.0314	0.00562	0.00421	0.01535	0.01101	235.8
Արփիլճի ջրամբար	109	Ամբարտակի մոտ	-	-	-	-	0.00329	0.00324	0.06595	0.00753	-
Ապարանի ջրամբար	111	Ամբարտակի մոտ	-	-	0.495	-	-	-	0.08224	0.00386	-
Երևանյան լիճ	112	Ամբարտակի մոտ	-	-	1.431	0.0976	0.00134	0.00338	0.01707	0.02973	-
Ազատի ջրամբար	113	Ամբարտակի մոտ	4.7	-	-	-	0.00101	-	0.05177	0.01602	-
Կեչուտի ջրամբար	114	Ամբարտակի մոտ	-	-	-	-	-	-	-	0.00431	-